Հաստատված է

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի թիվ 21/16-30.06.2023թ. որոշմամբ

Ուժի մեջ է մտնում 06.07.2023թ.

Խորհրդի նախագահ

---------- Ս. Սուքիասյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ

ԵՐԵՎԱՆ 2023

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ			
Հ/Հ	Որոշման/Հրամանի ամսաթիվ	Որոշման/Հրամանի համար	Փաստաթղթի նույնականացուցիչը
1	30.06.2022թ.	21/16-30.06.2023թ.	ISO/KG/A.7/043/30.06.2023/1

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) խորհրդին կից Կադրային քաղաքականության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կազմն ու կառուցվածքը, խնդիրները, գործառույթները, գործունեության կազմակերպումն ու ընթացակարգը:

1.2. Կոմիտեն հանդիսանում է Բանկի խորհրդին կից խորհրդատվական մարմին, որը ստեղծվում է Բանկի Խորհրդի որոշմամբ:

1.3. Կոմիտեն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի, ՀՀ ԿԲ կողմից ընդունված որոշումների, Բանկի ներքին իրավական ակտերի և սույն կանոնակարգի, Բանկի կառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների պահանջներով:

2. ԿՈՄԻՏԵԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1. Կոմիտեի հիմնական խնդիրներն են՝

2.1.1. Բանկի կառուցվածքի, Բանկի ստորաբաժանումների կառուցվածքի վերանայման, բանկի որոշակի պաշտոնների թեկնածուների նշանակման վերաբերյալ առաջարկների քննարկումը:

2.1.2. Բանկի կադրային քաղաքականությանը, աշխատակիցների վարձատրության բոնուսային համակարգին և խրախուսանքներին ու տույժերին վերաբերող ներքին իրավական ակտերի քննարկումը:

2.2. Կոմիտեն իր խնդիրներին համապատասխան կատարում է հետևյալ գործառույթները.

2.2.1. ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կադրային քաղաքականության (ներքին կարգապահական կանոններ)» կարգով սահմանված խորհրդի իրավասության պաշտոնների թեկնածուների հետ, Բանկի վարչության իրավասության պաշտոնների թեկնածուների հետ (որոնք նշանակվում են խորհրդում հարցազրույց անցնելուց հետո) հարցազրույցների անցկացումը և Բանկի խորհրդին խորհրդատվական բնույթի առաջարկների տրամադրումը:

2.2.2. Բանկի կառուցվածքի, Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքի վերանայման վերաբերյալ առաջարկների քննարկումը և Բանկի խորհրդին խորհրդատվական բնույթի առաջարկների տրամադրումը:

2.2.3. Բանկի կադրային քաղաքականությանը, աշխատակիցների վարձատրության բոնուսային համակարգին և խրախուսանքներին ու տույժերին վերաբերող ներքին իրավական ակտերի քննարկումը և Բանկի խորհրդին խորհրդատվական բնույթի առաջարկների տրամադրումը:

3. ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

3.1. Կոմիտեն կազմված է բացառապես խորհրդի անդամներից:

3.2. Կոմիտեի կազմը հաստատվում է խորհրդի կողմից և չի կարող 4 հոգուց պակաս լինել: Կոմիտեն ունի հետևյալ կառուցվածքը՝ նախագահ, քարտուղար, որը ի պաշտոնե խորհրդի քարտուղարն է, և անդամներ:

4. ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԵՐԸ

4.1. Կոմիտեի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության:

4.2. Կոմիտեի անդամները կարող են նիստերին մասնակցել իրական ժամանակի ռեժիմում հեռախոսային կապի, հեռուստակապի կամ այլ հաղորդակցական սարքերի միջոցով, որոնց շնորհիվ նիստին մասնակցող բոլոր անձինք ի վիճակի կլինեն լսել միմյանց: Նման ձևով նիստին մասնակցելը կհամարվի նիստին անձամբ ներկայություն:

4.3. Կոմիտեի նիստերը իրավազոր են, եթե անդամների առնվազն կեսից ավելին մասնակցում են նիստին:

4.4. Նիստերի արձանագրությունները վարում է քարտուղարը կամ նրա կողմից նշանակված անձը:

4.5. Արձանագրությունները ստորագրվում են նիստի մասնակից Կոմիտեի բոլոր անդամների կողմից:

4.6. Կոմիտեի նիստերի արձանագրությունները պահվում են առանձին թղթապանակներում՝ Բանկի Խորհրդում:

4.7. Կոմիտեի նիստերին կարող են հրավիրվել Բանկի աշխատակիցներ կամ այլ անձինք: